



05/18010-16
8/06.2/15144-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 1372-Ն

29 12 2016 թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ԿՈԼԵԳԻԱ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 50-Ա
ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱՑ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016
թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 16-րդ կետի 4-րդ
ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին
կից կոլեգիա՝ համաձայն հավելվածի:
2. Հրամանը հայտարարել նախարարության աշխատակազմի կառուցվածքային և
առանձնացված ստորաբաժանումներին, նախարարության կառավարմանը հանձնված
պետական ոչ առևտրային կազմակերպություններին և փակ բաժնետիրական
ընկերություններին:
3. Ուժը կորցրած ճանաչել «տարածքային կառավարման և արտակարգ
իրավիճակների նախարարի 2015 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի
Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների
նախարարին կից կոլեգիա ստեղծելու մասին» թիվ 50-Ա հրամանը:

Ժամանակավոր պաշտոնակատար՝

Հ. Մխիթարյան

Sign